


**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Կ. ՊՈԼՍԻ ԼՈՒՍԱԲՆԱԿ Տ. ՀԱԿՈԲ ՆԱԼՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ 280-ԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

## ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ, ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Բարեխնամողն Աստուած, մեր Մայր Եկեղեցու բազմադարեան պատմութեան ընթացքում, մեր ազգին յաճախ է պարգևել Ս. Հոգով ներշընչուած եկեղեցական դէմքեր, որոնք լի երկնատուր շնորհներով, եռանդնայորդ գործունէութեամբ, նոր լոյսերով փառաւորել են մեր բազմադարեան առաքելական Եկեղեցու անդաստանը:

Ինչպէս յայտնի է, ԺԸ դարի առաջին կէսին, այդպիսի բազմաշնորհ դէմքերից մին հանդիսացաւ Յովհաննէս Կոլոտ արքեպիսկոպոս Բաղիշեցին, որ, իբրև Կոստանդնուպոլսի հայոց պատմական Աթոռի Գահակալ, հոգիների լուսաւորութեան լայն գործունէութիւն ծաւալեց, իր հիմնած բազմաթիւ դպրոցներով, տպարաններով ու գրական և կրթական բեղուն իրագործումներով:

Այսօր, Մենք երջանիկ ենք յիշատակելու անունը և գործը նրա ամենաշնորհալի աշակերտ և նրա լուսաւորչական առաքելութիւնը շարունակող լուսաբնակ Տ. Յակոբ արքեպիսկոպոս Նալեանի, պատրիարքը հայոց Կ. Պոլսի, որի ծննդեան 280-ամեակը լրանում է այս տարի:

Տ. Յակոբ արքեպիսկոպոս Նալեան երկու անգամ բազմել է Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռին՝ 1741—49 և ապա 1752—64 թթ., իսկ 1749—52 թթ. եղել է Գահակալը Ս. Երուսաղէմի հայոց Պատրիարքական Աթոռի: Այսպիսով, նա շուրջ 24 տարիներ շարունակ բախտորոշ դեր է կատարել արևմտահայոց հոգևոր-կրթական ու գրական վերածննդեան ճանապարհի վրայ:

Մեծահամբաւ իր ուսուցչի օրինակով, Նալեան պատրիարք եղել է եկեղեցական կեանքի կազմակերպիչ հզօր ոգի, բանիմաց քարոզիչ, մանկավարժ և մատենագիր, հասցնելով ինքը ևս շնորհալի աշակերտներ, հոգևոր գործիչներ, կրթական մշակներ:

Բարձր գնահատանքի են արժանի հոգելոյս պատրիարքի դաւանաբանական, բարոյախօսական և գրական գործերը, որոնք իրենց արժէքը պահել են մինչև այսօր: Նալեան պատրիարք առաջինը հանդիսացաւ, որ հմուտ ուսումնասիրութեամբ վերարժևորեց Ս. Գրիգոր Նարեկացու և Եզնիկ Կողբացու գրական-աստուածաբանական մեծ ժառանգութիւնը: Նրա «Վէմ հաւատոյ»-ն, «Զէն հոգևոր»-ը, «Գիրք աղօթից»-ը և այլ գործեր, մնայուն արժէքներ են մեր եկեղեցական մատենագրութեան մէջ:

Մեր օրերի մեծանուն պատրիարք՝ Մաղաքիա Օրմանեանի վկայութեամբ՝ «շատ մեծ եղաւ Նալեանի արդիւնքը Հայ Եկեղեցիի համար. իրաւամբ արժանի է, որ Որոտնեցիէ և Տաթևացիէ ետքը՝ մեր ուղղափառ սուրբ Եկեղեցւոյն բազմերախտ վարդապետներուն հետ յիշուի իր անունը»:

Այսպէս է, որ Յակոբ Նալեան պատրիարք իր անձնուրաց կեանքով ու բազմարդիւն գործունէութեամբ հանդիսանում է ԺԸ դարի մեծագործ մեր պատրիարքներից մէկը:

Մենք սիրով և խոր գոհունակութեամբ ենք ընդառաջում Ամենապատիւ Մեր Եղբօր, Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանի 25 մարտ 1981 թուակիր դիմումին և սոյն Մեր կոնդակով հրաւիրում ենք մեր Մայր Եկեղեցին և համայն մեր հաւատացեալ ժողովուրդը որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, սոյն տարուայ աշնան արժանավայել կերպով տօնախմբելու պայծառ յիշատակը և անկորնչելի վաստակը Յակոբ Նալեան սրբազան պատրիարքի, նաև ջերմապէս աղօթելու նրա հոգու խաղաղութեան համար յաւերժութեան մէջ:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 17): Ամէն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 24 Յունիսի
1981 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԼ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1063